Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԼՃ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 13.Լոռու մարզ - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
15:35:05 AMST

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 103 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 1 դեպքի վարում (վերափաստագրման կազմակերպում), 14 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Ծաղկաձորում իրականացվող «Ոսկե սերունդ» սոցիալ-կրթական ամառային ճամբար են ուղղորդվել բարեգործական ճաշարանի 6 շահառուներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
    - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 40 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող խմբակներին՝ գրական, երգի, նկարչական, առողջապահական, հմուտ ձեռքեր:
    - Ճաշարանի 70 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված հետևյալ միջոցառումներին՝ Սուրբ Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, Հայոց մեծ եղեռի զոհերի հիշատակի օր, Աշխատավորների միջազգային օր, Հաղթանակի օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, ՀՀ քաղաքացու օր: Յուրաքանչյուր ամիս նշվել է այդ ամսում ծնված շահառուների ծննդյան տարեդարձերը:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Սուրբ Զատիկ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/sljyg, http://surl.li/tlsrb),
- Մայրության և գեղեցկության օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/slkir, http://surl.li/slkjx, http://surl.li/ukwwv),
- ՀՀ Քաղաքացու օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ticfz, http://surl.li/ticgn),
- Հոգեբանական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/ukxax, http://surl.li/wwhxqi),
- Ծննդյան տոնի նշում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/wbaoql):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում բարեգործական ճաշարանի պատասխանատուները և սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից «Դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով Երևանում կազմակերպված վերապատրաստմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 103/103 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 41 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 22 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 3 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 48 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 62 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 0 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 103 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 70 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «08» 07. 2024թ
(ստորագրություն, անուն,ազգանուն)